

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ըստ նկարի՝ հյուսիսային կիսագնդում տարվա ո՞ր եղանակն է համապատասխանում 4-րդ պատկերին.

- 1) աշունը
- 2) ձմեռը
- 3) գարունը
- 4) ամառը



2

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 100 000 է, նշանակում է, որ իրական չափերը փոքրացված են.

- 1) հարյուր հազար անգամ
- 2) տասն անգամ
- 3) հարյուր անգամ
- 4) հազար անգամ

3

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 16 սմ է, իսկ իրականում՝ 4800 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 76 800 000
- 2) 1 : 30 000 000
- 3) 1 : 16 000 000
- 4) 1 : 32 000 000

4

Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) ժամերի տարբերությունը
- 2) մագնիսական բևեռների տեղափոխությունը
- 3) պասսատների առաջացումը
- 4) մուսսոնների առաջացումը

5

Օդի ամենաբարձր ջերմաստիճանն անամպ օրերին լինում է.

- 1) արևամուտից անմիջապես առաջ
- 2) արևածագից անմիջապես հետո
- 3) կեսօրին
- 4) կեսօրից 2–3 ժամ հետո

6

Կլիմա ձևավորող գործոններից չեն (չէ).

- 1) աշխարհագրական լայնությունը
- 2) մթնոլորտային ճնշումը
- 3) ծովային հոսանքները
- 4) գերիշխող քամիները

7

Հյուսիսային բևեռային շրջագծի վրա բևեռային ցերեկ լինում է.

- 1) աշնանային գիշերահավասարի օրը
- 2) ձմեռային արևակայության օրը
- 3) գարնանային գիշերահավասարի օրը
- 4) ամառային արևակայության օրը

8


Երևան քաղաքում տարվա ընթացքում ըստ ամիսների ստացվել են միջին ամսական հետևյալ ջերմաստիճանները. $-4,8^{\circ}$, $-1,3^{\circ}$, $+5,4^{\circ}$, $+11,8^{\circ}$, $+17^{\circ}$, $+21,1^{\circ}$, $+24,7^{\circ}$, $+24,9^{\circ}$, $+20,1^{\circ}$, $+13,5^{\circ}$, $+6,2^{\circ}$, $-0,9^{\circ}$: Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը կլինի.

- 1) $29,7^{\circ}$
- 2) $19,9^{\circ}$
- 3) $25,6^{\circ}$
- 4) $29,6^{\circ}$

9

Քարտեզում կլիմայական ո՞ր գոտին է նշված 1 թվով.


- 1) արևադարձային
- 2) մերձարևադարձային
- 3) հասարակածային
- 4) մերձհասարակածային



10

Ի՞նչ է պատկերված նկարում.

- 1) անտիցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 2) անտիցիկլոն հարավային կիսագնդում
- 3) ցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 4) ցիկլոն հարավային կիսագնդում



11

«Ծով – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ադրիատիկ ծով – Կորսիկա կղզի
- 2) Օխոտի ծով – Սախալին կղզի
- 3) Արաբական ծով – Շրի Լանկա կղզի
- 4) Կարիբյան ծով – Նյուֆաունդլենդ կղզի

12

Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) փոխվում է ջերմության և խոնավության քանակը
- 2) հողերը ճահճանում են
- 3) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր
- 4) ձմեռները դառնում են խստաշունչ

13

Բնութագրումով որոշել կլիմայական գոտին.

Այս կլիմայական գոտում ամբողջ տարին իշխում է չոր ու սառն օդային զանգվածը: Խիստ ցածր ջերմաստիճանների պատճառով տեղումները մշտապես լինում են ձյան տեսքով, որը չի հալվում կարճ և ցուրտ ամառվա ընթացքում: Ո՞ր կլիմայական գոտին է.

- 1) մերձարկտիկական
- 2) մերձարևադարձային
- 3) արկտիկական
- 4) բարեխառն

14

Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մայրցամաքի միջին բարձրությունը 840 մ է:
- 2) Արևմտասիբիրական և Թուրանի դաշտավայրերի հիմքում ընկած են հնագույն պլատֆորմներ:
- 3) Երկրակեղևի բարձրացումները հատկապես բնորոշ են գետահովիտներին:
- 4) Գործող հրաբխային շրջանները և սեյսմիկ գոտիները համընկնում են:

15

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
- 2) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտու ժամանակը 1 ժամով առաջ է նախորդից:
- 3) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
- 4) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:

16

«Հարթավայր – դրա տարածքով հոսող գետ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Լավրենտյան սարահարթ – Կոլորադո
- 2) Կենտրոնական հարթավայրեր – Մակենզի
- 3) Մեծ ավազան սարահարթ – Յուկոն
- 4) Մեծ Հարթավայրեր – Միսսուրի

17

«Գետ – ծոց» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ինդոս – Օմանի
- 2) Կուպերս կրիկ – Մեծ Ավստրալական
- 3) Կոլորադո – Մեքսիկական
- 4) Լուար – Բիսկայան

18

«Գետ – վտակներ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) Կուր – Արաքս, Ախուրյան
- 2) Գանգես – Բրահմապուտրա, Ինդոս
- 3) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս
- 4) Վոլգա – Օկա, Կամա

19

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Եթե հակումն արևմտյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

- 1) մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը
- 2) մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով
- 3) մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը
- 4) մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակումի վրա

20

Քաղաքն արևելյան երկայնության 57⁰-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 5-րդ
- 2) 3-րդ
- 3) 2-րդ
- 4) 4-րդ

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օդը տաքանում է Երկրի մակերևույթից ստացած ջերմության հաշվին:
- 2) Հասարակածային լայնություններում գերիշխում է մթնոլորտային բարձր ճնշման մարզը:
- 3) Օդի ջերմաստիճանի բարձրացումից մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
- 4) Մթնոլորտի կազմում թթվածնի քանակը գերազանցում է ազոտի քանակին:

22

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ակոնկագուան արևմտյան կիսագնդի ամենաբարձր լեռնագագաթն է:
- 2) Անդերի բարձրլեռնային մարգագետինները տեղացիներն անվանում են պարամոս:
- 3) Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը Հարավային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա սահմանափակվում է արևմտյան առափնյա շրջաններով:
- 4) Հարավային Ամերիկայի արևադարձային գոտու արևելյան մասն ամբողջությամբ զբաղեցնում է անապատների և կիսաանապատների զոնան:

23


Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Աֆրիկայում.

- 1) Լավրենտյան սարահարթ, Կոտոպախի հրաբուխ, Մեծ արջի լիճ
- 2) Նուբիական սարահարթ, Կամերուն հրաբուխ, Ռուդոլֆ լիճ
- 3) Պադանի դաշտավայր, Վինսոն լեռ, Իսիկ Կուլ լիճ
- 4) Լա Պլատայի դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Էրի լիճ

24

Քարտեզում *Բ* տառով *ո՞ր* նեղուցն է նշված.

- 1) Բոսֆորի
- 2) Կերչի
- 3) Դարդանեղի
- 4) Ջիբրալթարի



25

Քարտեզում *Է* տառով *ո՞ր* մայրաքաղաքն է նշված.

- 1) Ռիգա
- 2) Վիլնյուս
- 3) Տալլին
- 4) Կոպենհագեն

26

Ժողովրդագրական անցման առաջին փուլին բնորոշ է բարձր ծնելիությունը: Այս փուլը համընկնում է.

- 1) երկրների զարգացման արդյունաբերական փուլին
- 2) ժողովրդագրական ճգնաժամին
- 3) երկրների զարգացման ագրարային փուլին
- 4) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) սուբուրբանիզացում
- 2) տարաբնակեցում
- 3) ուրբանիզացում
- 4) կեղծ ուրբանիզացում

28

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրը Եվրոպայի արևելյան և Ասիայի հյուսիսային մասում է: Երկրի ամերը ողողվում են 3 օվկիանոսների պատկանող ծովերի ջրերով: Ըստ պետական կառուցվածքի՝ դաշնային պետություն է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ռուսաստանը
- 2) Ուկրաինան
- 3) Կանադան
- 4) ԱՄՆ-ը

29

Երկրի բնակչության թիվը 18,6 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 7,812 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 42 %
- 2) 58 %
- 3) 37,5 %
- 4) 52 %

30

10 մլն-ից ավելի բնակչություն ունեն.

- 1) Տոկիոն և Բեռլինը
- 2) Լոնդոնը և Հոմբը
- 3) Վաշինգտոնը և Անկարան
- 4) Մոսկվան և Մեխիկոն

31

«Պետություն – պետական կարգ» գույգերից ընտրել սխալը.

- 1) Իրաք – հանրապետություն
- 2) Իրան – միապետություն
- 3) Թուրքիա – հանրապետություն
- 4) Օման – միապետություն

32

«Ժողովրդագրական ճգնաժամը» բնորոշ է.

- 1) Հնդկաստանին և Իրանին
- 2) Բրազիլիային և ԱՄՆ-ին
- 3) Չինաստանին և Թուրքիային
- 4) Գերմանիային և Ավստրիային

33

«Կեղծ ուրբանիզացիան» բնորոշ է.

- 1) Արևելյան Ասիային
- 2) Ավստրալիային և Օվկիանիային
- 3) Լատինական Ամերիկային
- 4) Արևմտյան Եվրոպային

34

Ո՞րը չի վերաբերում քիմիական արդյունաբերությանը.

- 1) բնապահպանական տեսակետից համարվում է անվտանգ ճյուղ
- 2) սինթեզում, ստեղծում է այնպիսի նյութեր, որոնք բնության մեջ չեն հանդիպում
- 3) ունի կոմբինացման մեծ հնարավորություններ
- 4) ունի հումքային ընդարձակ բազա

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սարքաշինության տեղաբաշխման վրա առավել մեծ է հումքային ռեսուրսների ազդեցությունը:
- 2) Լատինական Ամերիկայի երկրների արտահանման մեջ գերակշռում է մեքենաշինական արտադրանքը:
- 3) Արևմտյան Եվրոպայի երկրների արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը:
- 4) Թեթև արդյունաբերության ձեռնարկությունները տեղաբաշխվում են աշխատանքային ռեսուրսների կենտրոնացման վայրերում:

36

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Խոշոր քաղաքներից են Լիվերպուլը և Լիոնը:
- 2) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթր քաղաքն է:
- 3) Տնտեսությունը զարգացման հետարդյունաբերական փուլում է:
- 4) Սև և գունավոր մետաղաձուլությունը կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:

37 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ձկան որսով աշխարհում առաջատարը Չինաստանն է:
- 2) Եվրոպական երկրներում թռչնաբուծությունը զարգանում է արդյունաբերական եղանակով:
- 3) Խոշոր եղջերավոր անասնապահությունն ապահովում է մսի համաշխարհային արտադրության 3/4-ը:
- 4) Խոզաբուծությունը մերձքաղաքային տնտեսության մասնագիտացման ճյուղերից է:

38 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ծովային տրանսպորտի բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է Հնդկական օվկիանոսին:
- 2) Ավտոմոբիլային տրանսպորտի դերը հատկապես մեծանում է կարճ տարածությունների վրա բեռներ փոխադրելիս:
- 3) Ջարգացող երկրների տրանսպորտային ցանցի խտությունը բարձր է:
- 4) Համաշխարհային տրանսպորտային բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է երկաթուղային տրանսպորտին:

39 **Տրված երկրներից ո՞րն է առավել սակավ անտառապատ.**

- 1) Ռուսաստան
- 2) Կանադա
- 3) Իրան
- 4) Ինդոնեզիա

40 **Թուրքիային սահմանակից են.**

- 1) Սաուդյան Արաբիան և Վրաստանը
- 2) Օմանը և Ռուսաստանը
- 3) Իսրայելը և Իրանը
- 4) Սիրիան և Հունաստանը

41 **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Երկրի կազմում են Սիցիլիա և Կորսիկա կղզիները:
- 2) Հարուստ է սնդիկի և ծծմբի պաշարներով:
- 3) Արևմտյան ափերը ողողում են Ադրիատիկ ծովի ջրերը:
- 4) Մակերևույթը հիմնականում հարթավայրային է:

42

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ավերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով, սակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Բրազիլիան
- 2) Արգենտինան
- 3) ԱՄՆ-ը
- 4) Մեքսիկան

43

Ո՞ր շարքի լեռնագագաթներն են դասավորված բարձրությունների նվազման կարգով.

- 1) Նեմրոթ, Արագած, Մարութա
- 2) Քաջքար, Կապուտջուղ, Աժդահակ
- 3) Սրմանց, Թոնդրակ, Սիփան
- 4) Աոնոս, Նեմրոթ, Ջիլո

44

«Գետ – վտակ» զույգերից ընտրել սխալը.

- 1) Արաքս – Թարթառ
- 2) Ճորոխ – Օլթի
- 3) Կուր – Դեբեդ
- 4) Արևելյան Եփրատ – Բագրևանդ

45

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են Ալաշկերտի, Մշո, Խարբերդի դաշտերը:
- 2) Արաքս գետի հովտում հայտնի են Կարնո և Երզնկայի դաշտերը:
- 3) Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում է Բյուրակն լեռնազանգվածը:
- 4) Արդահանի և Ախալքալաքի սարավանդները Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում են:

46

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ հզորությամբ 4-րդ էլեկտրակայանը Արգելի ջրէկն է:
- 2) ՀՀ-ում մինչև 1963 թվականն ամբողջ էլեկտրաէներգիան արտադրվում էր ջրաէլեկտրակայաններում:
- 3) ՀՀ-ում ներկայումս փոքր գետերի վրա նոր ջրէկներ են կառուցվում:
- 4) ՀՀ էլեկտրահաշվեկշիռը բացասական է:

47

ՀՀ շինանյութերի արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.

- 1) անթափոն արտադրության կազմակերպումը
- 2) որակյալ աշխատուժի առկայությունը
- 3) տրանսպորտաաշխարհագրական նպաստավոր դիրքը
- 4) հումքի մեծածավալ առկայությունը և պահանջարկը

48

Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) ալպյան և մերձալպյան
- 2) լեռնատափաստանային
- 3) կիսաանապատային
- 4) անտառային

49

Ո՞ր գետը չի հոսում Արագածոտնի մարզի տարածքով.

- 1) Մեծամոր
- 2) Գեղարոտ
- 3) Ամբերդ
- 4) Քասաղ

50

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:
- 2) Բնակչության խտությունն արևելքից արևմուտք շարժվելիս նվազում է:
- 3) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:
- 4) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:

51 Քարտեզում Աղստև գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Ա
- 4) Դ



52 Քարտեզում Ստեփանավան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

53 «Օգտակար հանածո – հանքավայր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) գունավոր մետաղներ – Վերին լճի շրջակայք
- 2) քարածուխ – Ապալաչներ
- 3) բնական գազ – Կորդիլիերներ
- 4) երկաթ – Հավայան կղզիներ

54

Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ:

- 1) «Կարմիր գրքի» ստեղծումը
- 2) գերխոնավ հողերի ցամաքեցումը
- 3) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 4) արհեստական անտառների ստեղծումը

55

Այն օրգանիզմները, որոնք քայքայում են օրգանական մնացորդները, սնվում դրանցով և օրգանական նյութերը վերափոխում անօրգանականի, կոչվում են.

- 1) պեստիցիդներ
- 2) պրոդուցենտներ
- 3) ռեդուցենտներ
- 4) կոնսումենտներ

56

Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրազդանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Արգելի | 5) Շամբի |
| 2) Երևանի | 6) Արգնիի |
| 3) Քանաքեռի | 7) Այրումի |
| 4) Տաթևի | 8) Սևանի |

57

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|------------|
| 1) Կոնգո | 5) Մեկոնգ |
| 2) Կոլումբիա | 6) Մակենզի |
| 3) Օրինոկո | 7) Օբ |
| 4) Սիրդարյա | 8) Պարանա |

58

Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- | | |
|-------------|-----------|
| 1) Ալավերդի | 5) Ախթալա |
| 2) Քաջարան | 6) Սոթք |
| 3) Կապան | 7) Ագարակ |
| 4) Շամլուղ | 8) Արարատ |

59 **Գրել Ամերիկա աշխարհամասի ավերը ողողող ծովածոցերի համարները.**

- | | |
|---------------|----------------------|
| 1) Գվինեական | 5) Սուրբ Լավրենտիոսի |
| 2) Լա Պլատայի | 6) Օմանի |
| 3) Բենգալական | 7) Բիսկայան |
| 4) Հուդզոնի | 8) Այասկայի |

60 **Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով գերիսցումը չեն.**

- | | |
|-------------|--------------|
| 1) ԱՄՆ | 5) Պակիստան |
| 2) Կանադա | 6) Ճապոնիա |
| 3) Ֆրանսիա | 7) Բանգլադեշ |
| 4) Բրազիլիա | 8) Ինդոնեզիա |

61 **Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.**

- | | |
|--------------|----------------|
| 1) եքիդնա | 5) Էմու ջայլամ |
| 2) կոնդոր | 6) կենգուրու |
| 3) բիզոն | 7) կարիբու |
| 4) բադակտուց | 8) ցեցե |

62 **Կուրի ավազանին պատկանող ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց ջրառատության աճման կարգով.**

- 1) Ադստև
- 2) Տավուշ
- 3) Դեբեդ

63 **Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ արևմուտքից արևելք հաջորդականության.**

- 1) Ավստրիա
- 2) Շվեյցարիա
- 3) Լիխտենշտայն
- 4) Ֆրանսիա

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 52°30' և արլ. ե. 23°30':
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

(65-66) Քաղաքի բնակչության թիվը 76 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 620 մարդ: Եկաճների թիվը 1630 մարդ է, մեկնաճների թիվը՝ 770 մարդ:

65

Որոշել միգրացիայի մնացորդը:

66

Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

(67-68) Նավը հս. լ. 21° 30' և արլ. ե. 47°-ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

67 Հարավային արևադարձից:

68 Հյուսիսային բևեռային շրջագծից:

69

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բնակչության բնական աճը կազմում է մոտ 9 %:
- 2) Թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
- 3) 60-ից բարձր տարիք ունեցողները կազմում են բնակչության շուրջ 6 %-ը:
- 4) Բնակչության ընդհանուր թվում կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 5) Ամենանոսր բնակեցվածը Վայոց ձորի մարզն է:
- 6) Բնակչության միջին խտությունն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:

70

Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Օդի ջերմաստիճանի տարեկան տատանումները հիմնականում կախված են տվյալ վայրի աշխարհագրական լայնությունից:
- 2) Ներքնոլորտում յուրաքանչյուր մեկ կիլոմետր իջնելիս օդի ջերմաստիճանը նվազում է 5°-6°-ով:
- 3) Օդի տարեկան միջին ջերմաստիճանը որոշում են տարվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությամբ:
- 4) Ձմռան ամիսներին, երբ Արեգակը հորիզոնի նկատմամբ ամենաբարձր դիրքում է, և ցերեկները կարճ են, Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
- 5) Օրվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է ջերմաստիճանի տատանման օրական լայնույթ:
- 6) Ամենուրեք օդի ամենացածր ջերմաստիճանը անամպ օրերին լինում է արևածագի պահին: